|---|---|---|---|
| առաջնահերթություններ | հայրենասիրության թեման միշտ քննարկել, ազգային տոներին, հերոսներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ կազմակերպել, | ազգային խորհրդանիշների, հերոսների մասին պատմող փոքրիկ ցուցադրություններ: | քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | Արդյունքում կկերտենք ազգային արժանապատվությամբ օժտված, հպարտ ու հայրենասեր քաղաքացիներ, ովքեր քննադատական մտածողությամբ օժտված կմտնեն կյանք: | Հաստատության տնօրեն,համակարգող, տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, աւսուցիչներ, զինղեկ: | 2023-2028 ուս տարիներ: |

| Խնդիրներ | Գործողություններ | Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում: | Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմների սահմանում: |
|---|---|---|---|
| 7Ուսումնառությունը որպես կանոն կառուցվում է գիտելիք հաղորդելու հենքով, մեղիադաշտում սովորողների կողմնորոշումը | 7.1Կազմակերպել դեբատներ , կլոր սեղաններ, դերային խաղեր՝ վեր հանելով ոչ միայն դպրոցի , այլև համայնքի հիմնախնդիրները: | Մշակված ձևաչափի մասին կազմել փաստաթուղթ | Ուսումնասիրության ընթացքին վերահսկողության հստակ ընթացակարգ |

| | | | |
|---|---|---|---|
| սահմանափակ է,կա կառուցողական մտածողության, բանավիճելու մշակույթի բացակայություն: | | | |
| | 7.2 Կատարել հետազոտական աշխատանքներ | Կարծիքներ և առաջարկություններ լսել | Մասնակցություն ընթացքին |
| | 7.3 Կազմակերպել հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ: | Տեքստային տեղեկատվություն առաջարկված կետերի վերաբերյալ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ** | **Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն:** | **Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների համաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն զարգացման ծրագրի իրականացման համար:** |
| Սովորողները սկզբնական շրջանում կկաշկանդվեն, կխուսափեն , քանի որ ունեն քննադատական մտածողության, հանրային ելույթի և բանավիճելու պակաս հմտություններ | Մոտիվացնող զրույցներ վարել Նախապատրաստել սովորողներին՝ տեսական նյութի մատուցմամբ, Փորձի փոխանակման նպատակով մասնակցել հանրային ակումբներում նմանատիպ ելույթների | Դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս կազմակերպելով դեբատներ, կլոր սեղաններ, դերային խաղեր՝ վերհանելով ինչպես դպրոցի, այնպես էլ համայնքի հիմնախնդիրները, սովորողները այդ | Դպրոցում առկա է մասնակցային ձևաչափով քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | հիմնախնդիրները խորությամբ կուսումնասիրեն առաջնային աղբյուրների միջոցով, կկատարեն հետազոտական աշխատանք, կկազմակերպվեն հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ: Պատրաստվելով հանրային ելույթի ինչպես կողմ, այնպես էլ դեմ ձևաչափով, Լսելով հանրային գործիչների ելույթները, ուշադրություն դարձնելով նրանց խոսքի ուժին, առոգանությանը, վստահելիությանը, համոզիչ և փաստարկված լինելուն, սովորողների մոտ կձևավորվեն քննադատական մտածողության տարրեր: | |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | Զարգացնելով աշակերտների քննադատական մտածողությունը, մեդիագրագիտությունը, հանրային ելույթի և բանավիճելու կարողությունները, | Հաստատության տնօրեն,տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, | Սկսած 2023 ուս տարվա 1-ին կիսամյակից |

| | | | |
|---|---|---|---|
| | կկերտենք իրավագիտակից, պետականամետ մտածողությամբ անհատներ: | տնօրենի մասնագիտացված կրթական աջակցություններ ի գծով տեղակալ, ՀԿ-ներ | |

| Խնդիրներ | Գործողություններ | Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում: | Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողությա ն մեխանիզմների սահմանում: |
|---|---|---|---|
| 8 ՏՀՏ-ների ներդրմամբ և նորամուծություն ների կիրառմամբ կրթության կազմակերպման, ռոբոտաշինությա ն նկատմամբ սովորողների անտարբեր վերաբերմունք | 8.1 Բարձրացնել ՏՀՏ-ների կիրառմամբ դասերի որակը՝որոշակի ձևաչափ մշակելով/յուրաքա նչյուր ամիս կազմակերպել ՏՀՏ-ների կիրառմամբ 5 դաս/ | Մշակված ձևաչափի մասին տեքստային տեղեկություն | Ուսումնասիրու թյան ընթացքին վերահսկողությ ան հստակ ընթացակարգ |
| | 8.2Մշակված ձևաչափի փորձարկում | Կարծիքներ և առաջարկություններ | Մասնակցությու ն ընթացքին |
| | Ձևաչափին համապատասխան գործողությունների արդյունքում տվյալների հավաքագրում | Տեքստային տեղեկատվություն առաջարկված կետերի վերաբերյալ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ** | **Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն:** | **Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն զարգացման ծրագրի իրականացման** |

| | | | **համար:** |
|---|---|---|---|
| Սովորողների մոտ մոտիվացիայի պակաս | Շրջայց կազմակերպել համայնքում գործող Ռոբոտաշինության խմբակ, պատրաստել էլեկտրոնային թեստեր ,խաչբառներ/quizziz , LINO, learningApps/ և հենց դասապրոցեսի ընթացքում արդյունքները ներկայացնել | Ունենք համապատասխան աշխատանքային սենյակ՝ համակարգչային դասարան, համակարգիչներ, ինտերնետ կապի հասանելիություն: | Դպրոցում առկա է մասնակցային ձևաչափով քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | Համայնքում գործող Ռոբոտաշինության խմբակի աշխատանքներին մեծ թվով սովորողներ ներգրավելով, խրախուսելով կազմակերպել աշխատանքների տոնավաճառ /հրավիրել ՏԻՄ ներկայացուցիչների, ծնողների, համայնքի ներկայացուցիչների/:<br><br>Ձեռք բերված գումարը նպատակաուղղել դպրոցի կարիքներին: | Հաստատության տնօրեն,համակարգող,տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ , ուսուցիչներ: | Սկսած 2023 ուս տարվա 1-ին կիսամյակից |

| | | | |
|---|---|---|---|
| | Սովորողները լուծումներ կփնտրեն դպրոցական որոշ ֆունկցիաների ավտոմատացման ուղղությամբ /խելացի դպրոց/: | | |

| **Խնդիրներ** | **Գործողություններ** | **Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում:** | **Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմների սահմանում:** |
|---|---|---|---|
| 9 Հեռավար կրթության արդյունավետությ ան ոչ բավարար լինելը, մեթոդների իրազեկվածությա ն պակասը զգալիորեն ազդում են կրթության որակի վրա: | 9.1 Հեռավար ուսուման գործիքների ուսումնան կազմակերպման ձևաչափի մշակում | Մշակված ձևաչափի մասին տեքստային տեղեկություն | Ուսումնասիրությ ան ընթացքին վերահսկողությա ն հստակ ընթացակարգ |
| | 9.2Մշակված ձևաչափի փորձարկում | Կարծիքներ և առաջարկություններ | Մասնակցություն ընթացքին |
| | 9.3Ձևաչափին համապատասխան գործողությունների արդյունքում տվյալների հավաքագրում | Տեքստային տեղեկատվություն առաջարկված կետերի վերաբերյալ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ** | **Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական** | **Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն** |

| | | պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն: | զարգացման ծրագրի իրականացման համար: |
|---|---|---|---|
| Մեթոդների իրազեկվածությա ն պակաս | Զրույցներ վարել, բացատրել հեռավար ուսուցման գործիքների արդյունավետությու նը, հիշեցնել, որ ֆորսմաժորային իրավիճակում հեռավար ուսուցման շնորհիվ հնարավոր եղավ ապահովել նրանց կրթության շարունակականությ ուր: | Ունենք համապատասխան աշխատանքային սենյակ: Համակարգիչ, ինտերնետ կապի հասանելիություն,Go ogle classroom, microsoft teams հարթակներում աշխատանքի կազմակերպում: | Դպրոցում առկա է մասնակցային ձնաչափով քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | Հեռավար կրթության գործիքներին և մեթոդներին տիրապետելով՝ կապահովվի սովորողների ավելի մեծ լսարան, ուսումնական միջավայրի ճկունություն՝ համաժամանակյա և ոչ համաժամանակյա ուսուցմամբ, ուսուցիչները կկարողանան օգտվել պատրաստի ռեսուրսներից: Հեռավար գործիքները թույլ կտան իրականացնել սովորողների ուսուցանող և միավորային գնահատում: Կապահովվի բարձր | Հաստատության տնօրեն,տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, ինֆորմատիկայի ուսուցիչ: | Սկսած 2023 ուս տարվա 1-ին կիսամյակից: |

| | | | |
|---|---|---|---|
| | մոտիվացիա: | | |

# Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծություն

21-դարում տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ուսուցիչը և դպրոցը հայտնվել են ոչ շահավետ պայմաններում: Տեխնոլոգիաների զարգացման արդյունքում այսօր ձևավորվել են գործունեության ձևեր, որոնք շատ ավելի մեծ ազդեցություն են գործում սովորողների վրա, քան ուսուցիչները:Տեխնոլոգիաները սովորողի ուղեղի շատ ավելի մեծ հատվածներ են ակտիվացնում, քան դասագիրքը և ուսուցչի խոսքը: Ուսուցիչը հայտնվել է մրցակցության մեջ՝ չունենալով սովորեցնելու մենաշնորհ:

Այնուամենայնիվ, հավատարիմ մնալով նոր ժամանակների պահանջներին համապատասխան դպրոցի կերտման մեր կարգախոսին, մենք կփորձենք ստեղծել ուսումնական միջավայր , ուր տեխնոլոգիական առաջընթացը ոչ թե կխոչընդոտի, այլ, ընդհակառակը, կնպաստի կրթության որակի բարելավմանը, կրթության մեջ ուսուցչի դերի բարձրացմանը:Այսպես, յուրաքանչյուր դասասենյակում էլեկտրոնային գրատախտակի , տեսացրիչի, համակարգչի, ինտերնետային կապի առկայությամբ,սովորողների և մանկավարժների մեդիագրագիտության պայմաններում դասագրքերը լրացնելու, դրանց այլընտրանք ունենալու իմաստով կարևորվում է աղբյուրագիտական տեղեկույթ պարունակող տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, որոնք ինտեգրված գիտելիք հաղորդելու և սովորողների հիմնարար հմտություններ ձևավորելու կարևորագույն միջոցներն են:

***Ուժեղ կողմեր*** Դպրոցը ցանկանում է իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների ռազմավարական պլանավորում արդիական նպատակային մանկավարժամեթոդական տեխնոլոգիաների ներդրմամբ և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կառավարում ՏՀՏ ինտեգրմամբ:

***Թույլ կողմեր*** Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումն դեռևս սահմանափակվում է միայն գործողությունների թվարկմամբ և ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպում են առանց պլանավորման:

***Նպատակ*** 1Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ռազմավարական պլանավորում,

2 արդիական նպատակային մանկավարժամեթոդական տեխնոլոգիաների ներդրում,

3 ՏՀՏ ինտեգրում

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐՆԵՐ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ |
|---|---|---|
| Զարգացնել ուսուցիչների՝ ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման հմտությունները: | Ուսուցիչները համարում են, որ ՏՀՏ կիրառումը դասի ընթացքում ձևական է, դժվար իրականացվելի, ժամանակատար և շեղում է աշակերտների ուշադրությունը: Ավագ սերնդի ուսուցիչները համարում են, որ ՏՀՏ-ների կիրառումը երիտասարդների գործն է: ՏՀՏ-ների կիրառման անջրպետը ուսուցիչների և աշակերտների միջև վնասում է ուսուցչի հեղինակությանը, նվազեցնում ուսուցման կազմակերպման այլընտրանքային և արդիական հնարավորությունները: | 1 Կազմակերպել <<ՏՀՏ գործիքները ուսումնադաստիարակչական գործընթացում>> թեմայով վերապատրաստումներ<br>2 Հետևողականորեն կիրառել և դպրոցում ուսուցանված, և հերթական վերապատրաստման ընթացքում յուրացրած գործիքակազմը:<br>3 Յուրաքանչյուր ամիս կազմակերպել ՏՀՏ գործիքների կիրառմամբ դասեր, որոնց ժամանակ կփորձարկվեն և ուսուցիչների , և սաների գիտելիքները:<br><br>Արդյունքում մի քանի տարի անց կունենանք հմուտ, արհեստավարժ մանկավարժներ, թվային հարուստ ուսումնական բազա: |
| Դպրոցում իրականացնել ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի փորձարկում և համատեղ դասավանդում՝ հիմնված սովորողների անհատական առաջընթացի պլանավորման վրա: | Ուսուցիչը մենակ է մնացել ուսուցման գործընթացում, հայտնվել է տեխնոլոգիաների հետ անհավասար մրցակցության մեջ՝ չունենալով սովորեցնելու մենաշնորհ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման | Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Դպրոցի վարչական կազմն էլ վերահսկում է ուսուցչի աշխատանքը, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալիս և ապահովում նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը: |

| | | |
|---|---|---|
| | կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: | |

# Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

ՀՀ կառավարության կողմից հաստատված << Հանրակրթության պետական չափորոշչով>> սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2) սովորել սովորելու կարողունակություն,
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5) թվային և մեդիա կարողունակություն,
6) մշակութային կարողունակություն,
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8) տնտեսական կարողունակություն:

<< Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը>>:

Հավատարիմ մնալով պետության որդեգրած քաղաքականությանը՝ Ամասիայի միջնակարգ դպրոցը ևս կրթության կազմակերպման գործում առաջնորդվում է վերը թվարկված կարողունակությունները զարգացնելու սկզբունքով:

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները:Կարևոր է հասկանալ, թե ինչպես կարելի է տեղեկություններ տալ կրթության որակի մասին:

***Ուժեղ կողմեր*** ա.Ուսումնադաստիարակչական կարիքի գնահատում

բ. Հաստատության զարգացման ծրագրի տեսլականից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ռազմավարական պլանավորում

1 Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը ուսումնասիրելիս կարող ենք ասել, որ մեր դպրոցը սահմանել է ուսումնական գործընթացի նպատակներ և խնդիրներ, կիրառում է համապատասխան տեխնոլոգիաներ, ուսուցումը ձգտում է համապատասխանեցնել աշակերտների կարիքներին, պետական և առարկայական չափորոշիչներին, ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական նյութերի, սարքավորումների որոշակի քանակով, ուսումնական տարածքով, գույքով:

2 Կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպական գործողությունները կատարվում են ժամանակին և հնարավորինս անսխալ, մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ, կատարվող աշխատանքները ձևական չեն, միշտ վերլուծվում են ուսումնական և աշխատանքային պլանից շեղվելու պատճառները, մշակվում են դրանց ուղղման գործողություններ, վերացվում են սխալները և դրանց հետևանքները:

3 Հանրակրթական բոլոր աստիճաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ: Ճիշտ են սահմանված կրթական աստիճանների համագործակցությունը և փոխկապակցվածությունը, սակայն գործնականում կրթության որակը բարելավման կարիք ունի:

4 Դպրոցի մանկավարժների կողմից դասերը, միջոցառումները պլանավորվում են և համապատասխանում են նպատակին: Դասերը վերլուծվում են, կատարվում է թերությունների վերացման ուղիների մշակում:

***Թույլ կողմեր*** ա.Ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման և վերահսկողության պլանավորման բացակայություն

բ. ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման փուլում ընթացիկ կարիքների գնահատում և գործընթացի արդյունավետության բարելավում ՀՊՉ պահանջներին համապատասխան

գ.Համակողմանի և տարբեր ձևերով ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության գնահատման բացակայություն:

Դպրոցն իր առջև դրված խնդիրների լուծման համար հետևողական աշխատանքի ընթացքում բախվում է մի շարք խնդիրների՝ հնացած նյութատեխնիկական բազա , լաբորատորիաների գույքի անմխիթար վիճակ, փոքր դասասենյակներ, դիդակտիկ պարագաների բացակայություն:Գործնականում ևս

կրթության որակը բարելավման կարիք ունի:Անհրաժեշտ է բարձրացնել սովորողների մոտիվացիան, զարգացնել նրանց ութ կարողունակությունները:Միայն այդպես հնարավոր կլինի կազմակերպել դպրոցի կրթադաստիարակչական գործընթացը:

***Նպատակը*** Ստեղծել բարենպաստ բարոյահոգեբանական միջավայր , ուր սովորողները կլինեն մոտիվացված, ուսուցիչները ինքնակրթությամբ և պետության ընձեռած հնարավորությունների / վերապատրաստումներ, ատեստավորում / օգտագործմամբ կբավարարեն սովորողների կրթական կարիքները՝ ապահովելով բարձր կրթական որակ:

Այս նպակներին հասնելու և մեր առջև դրված խնդիրների լուծման **պատասխանատուներն** են ՀՀ կառավարությունը, հաստատության տնօրենը,համակարգողը, տնօրենի տեղակալը, մեթոդական միավորների նախագահները, աշակերտական խորհուրդը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը, ուսուցիչները, սովորողներն ու ծնողները:

Իբրև շարունակական աշխատանքի **վերջնարդյունք**՝ Ամասիայի միջնակարգ դպրոցը կարող է դառնալ տարածաշրջանում բարձր հեղինակություն վայելող գիտատեխնիկական առաջընթացին հարիր կրթական հաստատություն:

# Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը՝ դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր,դրանց վարումը/ նորմատիվ փաստաթղթեր/. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը՝ կարգերը, նորմատիվ ակտերը օգտագործվում են վարման կանոններին համապատասխան: Սահմանված կարգով հաստատված է դպրոցի կանոնադրությունը, ուսուցչի մրցույթի, սովորողների դասարանից դասարան տեղափոխման և այլ կարգերը: Սակայն ներքին իրավական ակտերը՝ աշխատակիցների և սովորողների ներքին կարգապահական կանոնները, թույլ են կիրառման, իրատեսականության, չափելիության ու ընդգրկունության առումով:

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և աշխատանքի ընթացքում լուրջ դժվարություններ չեն առաջացնում:

Հայաստանի Հանրապետություն հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:

1. Էլեկտրոնային դասամատյաններ

2. Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան (<<Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի լրացման՝գործածման կարգ>> )

Այս փաստաթղթերը լրացվում են ըստ խորհրդակցական մարմնի կանոնադրության:

***Ուժեղ կողմեր*** Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը՝ կարգերը, նորմատիվ ակտերը օգտագործվում են վարման կանոններին համապատասխան:

***Թույլ կողմեր*** Դպրոցի ներքին իրավական ակտերը թույլ են կիրառման, իրատեսականության, չափելիության ու ընդգրկունության առումով: Երբեմն գործածության ենթակա փաստաթղթերի կազմման ժամանակ առաջանում են որոշակի խնդիրներ. շատ աշխատատար են, ժամանակատար:

***Նպատակներ*** Ներքին իրավական ակտերի ստեղծում «SMART» ձևաչափով,որի շնորհիվ հնարավոր կլինի կապահովել ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին :

| Խնդիրներ | Գործողություններ | Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում: | Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմների սահմանում: |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1. Մասնակցային նոր մեխանիզմների մշակում և ներդնում: | Քննարկումների մասնակցային ձևաչափի մշակում | Մշակված ձևաչափի մասին տեքստային տեղեկություն | Ուսումնասիրության ընթացքին վերահսկողության հստակ ընթացակարգ |
| | Մշակված ձևաչափի փորձարկում | Կարծիքներ և առաջարկություններ | Մասնակցություն ընթացքին |
| | Ձևաչափին համապատասխան գործողությունների արդյունքում տվյալների հավաքագրում | Տեքստային տեղեկատվություն առաջարկված կետերի վերաբերյալ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ** | **Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն:** | **Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն զարգացման ծրագրի իրականացման համար:** |
| 1 Մոտիվացիայի պակաս<br>2Նոր մեխանիզմի ադապտացիոն դժվարություններ | 1.1 Մոտիվացիոն Զրույցներ<br>1.2 Մեխանիզմի հետ Ծանոթացման սեմինարներ | Ունենք համապատասխան աշխատանքային սենյակ: Համակարգիչ, ինտերնետ կապի հասանելիություն, տպիչ, թղթեր նույնպես առկա են: | Դպրոցում առկա է մասնակցային ձևաչափով քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | | Հաստատության տնօրեն,տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական | 2023 ուս տարվա 1-ին կիսամյակ |

| | | | |
|---|---|---|---|
| | | խորհուրդ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ | |

| **Խնդիրներ** | **Գործողություններ** | **Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում:** | **Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմների սահմանում:** |
|---|---|---|---|
| 2. Ներքին իրավական ակտերի լրամշակում | 2.1 Հավաքագրված տվյալներին համապատասխան իրավական ներքին իրավական ակտերի լրամշակում | Մշակված ձևաչափի մասին տեքստային տեղեկություն | Ուսումնասիրության ընթացքին վերահսկողության հստակ ընթացակարգ |
| | 2.2 Լրամշակված իրավական ակտերի ներդնում | Կարծիքներ և առաջարկություններ | Մասնակցություն ընթացքին |
| | | Տեքստային տեղեկատվություն առաջարկված կետերի վերաբերյալ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ** | **Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն:** | **Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն զարգացման ծրագրի իրականացման համար:** |
| Իրավական ակտի | Իրավական ակտի հետ | Ունենք համապատասխան | Դպրոցում առկա է մասնակցային |

| | | | |
|---|---|---|---|
| բովանդակության ոչ ճիշտ ընկալում | ծանոթացնող միջոցառումների կազմակերպում | աշխատանքային սենյակ: Համակարգիչ, ինտերնետ կապի հասանելիություն, տպիչ, թղթեր նույնպես առկա են: | ձևաչափով քննարկումներ և կառուցողական աշխատանքներ կազմակերպող մանկավարժներ և աշակերտներ: |
| | **Վերջնարդյունքները** | **Պատասխանատուներ** | **Ժամկետներ** |
| | | Հաստատության տնօրեն,տնօրենի տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ | 2023 ուս տարվա 1-ին կիսամյակ |

Ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարումն իրականացնելով համաձայն <<Հանրակրթության մասին >>ՀՀ օրենքի, <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն >>ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության, ուսումնական հաստատությունը կկարողանա համագործակցության մթնոլորտ ստեղծել, ուր հանրակրթական պետական ծրագրերի իրականացման վերահսկողության պայմաններում կունենանք պետական քաղաքականությանը հավատարիմ , հաստատուն առաջընթաց ապահովող դպրոց:

| Հանրակրթական պետական ծրագրերի իրականացման վերահսկողություն |
|---|

| ՀՀ ԿԳՄՍՆ | ՏԻՄ | ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|
| ԿՏԱԿ | | | Կոլեգիալ կառավարման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մարմին |
| ԿԶՆԱԿ | | | Գործադիր մարմին /տնօրեն/ |
| ԳԹԿ | | | Համակարգող |
| | | | Մանկավարժական խորհուրդ |
| | | | Ծնողական խորհուրդ |
| | | | Աշակերտական խորհուրդ |
| | | | Մեթոդական միավորումներ |

# Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատում

Ամասիայի միջնակարգ դպրոցի զարգացման համար հարկավոր է նրա առջև բացել լայն հնարավորություններ, դպրոցը պիտի լինի ոչ միայն աշակերտների, այլ նաև ողջ համայնքի կրթամշակութային կենտրոնը, կրթադաստիարակչական աշխատանք կատարի աշակերտների և նրանց ծնողների, համայնքի բոլոր բնակիչների հետ:Իբրև ժամանակակից դպրոցի մոդել՝ պետք է համապատասխանի տնտեսության և սոցիալական ոլորտի նորարարական զարգացման առաջատար նպատակներին, ապահովի երկրի բարեկեցության աճը և նպաստի մարդկային ներուժի ձևավորմանը: Կրթության ժամանակակից սկզբունքները,որոնցով առաջնորդվում է նաև մեր դպրոցը, ձևակերպվել են 21-րդ դարի կրթության միջազգային հանձնաժողովում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ներկայացված զեկույցում՝

- **սովորել ապրել** (կյանքի սկզբունքը),
- **սովորել միասին ապրել**,
- **սովորել ձեռք բերել գիտելիքներ** (խորը և ամբողջ կյանքի ընթացքում),
- **սովորել աշխատել** (կատարելագործել մասնագիտական կարողությունները, ձեռք բերել հմտություններ, որոնք հնարավորություն կտան հաղթահարել տարբեր իրավիճակներ):

Այդ նպատակին հասնելու համար պետք է ստեղծել

Ա. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր

Բ. Հալածանքին, օտարմանը ոչ ասող և բռնության կանխարգելման համար բարենպաստ միջավայր

Գ. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների բարձրացման մթնոլորտ

Դ. Դպրոց- համայնք կապերի ամրապնդմանը նպաստող, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպման միջավայր:

***Ուժեղ կողմեր*** 2019-2020 ուստարվանից դպրոցն անցել է համընդհանուր ներառման: Ուսուցիչները ուսումնական ծրագիրը, դասի պլանը, ուսուցման գործընթացը հարմարեցնում են նաև ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը: Ուսուցիչները, գիտակցելով ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը, ձեռնարկում են համապատասխան քայլեր. նրանք ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից:
Դպրոցում առկա են համագործակցային հարաբերություններ, որոնց շրջանակներում ուսուցիչների, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվում են բաց դասեր, միջոցառումներ, ընդգրկվում են դպրոցի աշակերտները:Դպրոցում անցկացվող ռազմամարզական ստուգատեսներին մասնակցում են համայնքի տարբեր դպրոցների սովորողներ:Խրախուսվում են ուսուցիչների համագործակցությունը, փորձի փոխանակումը,վերապատրաստումների շնորհիվ ձեռք բերած գիտելիքների կիրառումը:Դպրոցում առկա բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտը ստեղծում է առաջընթացի նոր հնարավորություններ: Դպրոցում <<WorldVision>>- ի և ՀՄԿ-ի նախաձեռնությամբ անցկացվել է <<Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում >> թեմայով երկօրյա վերպատրաստում, որի շնորհիվ ուսումնասիրվեց երեխաների պաշտպանության օրենսդրական դաշտը,սովորեցինք անվտանգ և բռնությունից պաշտպանված միջավայր ստեղծելու, բռնության դեպքերին արձագանքելու հմտություններ:
***Թույլ կողմեր*** Սաղմնային փուլում են ՀՊՉ-ով ներդրվող խմբակների ստեղծման, երկարօրյա ուսուցման կազմակերպման գործընթացները:Դպրոցում չկան ԿԱՊԿՈՒ հարմարեցումներ՝ թեքահարթակ, տեսողական, լսողական,հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար կրթության համապատասխան նյութեր:Ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացվում: Դպրոցը հնարավորություն ունի ծավալելու կրթական այլ ծառայություններ, սակայն չկան համապատասխան ֆինանսական միջոցներ դրանք իրականացնելու համար( լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
սովորողների սննդի կազմակերպում):Թույլ է համագործակցության և փորձի փոխանակման մակարդակը որոշ ուսուցիչների, ուսուցիչների և ծնողների միջև:

Այսօր ուսուցիչը միայնակ է մնացել սերնդակրթության դժվարին աշխատանքում: Շատ ծնողներ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չեն զբաղվում երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներով, երեխաների թերացումների պատճառները փնտրում են դպրոցի վատ աշխատանքի մեջ, չեն աջակցում ուսուցիչների աշխատանքին, ոմանք նույնիսկ խրախուսում են երեխաների բացակայությունը: Բռնության կանխարգելման և անձազանքման նպատակով անցկացվող վերապատրաստումներում պետք է ներգրավել նաև ծնողներին, խնամակալներին:ՀՀ և արտերկրի հանրակրթական դպրոցների հաջողված փորձի ուսումնասիրման և դրանց որոշ տարրերի տեղայնացման նախադեպ մեր դպրոցում չկա:

***Նպատակը*** Բարձրացնել մանկավարժների իրազեկվածության մակարդակը, կազմակերպել շարունակական վերապատրաստումներ:Ձեռնարկատիրական գործունեության ծավալման նպատակով դիմել դրամաշնորհային ծրագրերի:Դպրոց-մանկավարժ-ծնող-համայնք կապն ամրապնդելու նպատակով ուսումնական պրոցեսին մասնակից դարձնել նաև ծնողներին, համայնքի ներկայացուցիչներին:Խրախուսանքի տարբեր ձևերի կիրառումը պատվոգրերի, նպատակային էքսկուրսիաների, թանգարաններ և մշակութային օջախներ այցելությունների տեսքով կոգևորի թե՛ սովորողին, թե՛ սովորողի ծնողին, թե՛ ուսուցչին: Մենք ցանկանում ենք իրականացնել ՀՀ և արտերկրի հանրակրթական դպրոցների հաջողված փորձի ուսումնասիրում և դրանց որոշ տարրերի տեղայնացում:

***Ռիսկեր*** Մոտիվացիայի պակասը և' սովորողների, և' ծնողների, և' մանկավարժների մոտ, երկարօրյա ուսուցման կազմակերպման, ձեռնարկատիրական գործունեության ծավալման, ՏՀՏ գործիքների կիրառության ցածր մակարդակը, աշխատանքի ցածր վարձատրությունը, խրախուսման մեթոդների բացակայությունը ստեղծում են բարձր ռիսկայնություն:

***Ռիսկերը չեզոքացնող մեխանիզմներ*** 1 Կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը կբարձրացնի կրթության որակը,կստեղծի առողջ հարաբերություններ կրթության գործընթացի մասնակիցների միջև:

2 Աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնության խրախուսումն և խթանումը <<վարակիչ>> օրինակ, մոտիվացիայի աղբյուր կդառնան մյուսների համար:

3 Դպրոցի հաստիքացուցակի, նախահաշվի և տարիֆիկացիայի հրապարակման և թափանցիկության ապահովումը կստեղծի վստահության մթնոլորտ:

4 Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերմամբ և ներգրավումով կիրացվի նրանց կրթության իրավունքը, կստեղծվեն հավասար պայմաններ և հնարավորություններ:

5 Ծնող-դպրոց կապը կարելի է ամրապնդել՝ սովորողների և ծնողների ստեղծագործության օրեր հայտարարելով, մասնակից դարձնելով բաց դասերին և արտադասարանական միջոցառումներին, ծնողական հսկողություն սահմանելով միջանցքներում և դասասենյակներում:

6 Կազմակերպել իրազեկման միջոցառումներ:

7 Փորձի տեղյանացում կատարել

***Վերջնարդյունքներ*** 1 Կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,2 Աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնության խրախուսում և խթանում,3 Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և ներգրավում կրթական գործընթացում, 4 Ծնողական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում,5 Թեստային մտածողության փոխարեն ստեղծարար, ինքնուրույն մտածողություն,6 սովորեցնելով սովորել՝ տալ մտածողության բանալիներ:7 Անհատական մոտեցում, որն արտահայտվում է նախագծային աշխատանքի մեթոդով:

8 դասի վերջնարդյունքի կարևորում, կապը իրական կյանքի հետ:

9 Համագործակցային միջավայրի ստեղծում. ուսումնական այս միջավայրում սովորողն ավելի ուժեղ է և ինքնավստահ:

***Պատասխանատուներ*** Հաստատության տնօրեն,տնօրենի տեղակալ,համակարգող, մեթոդական միավորների նախագահներ, աշակերտական խորհուրդ, ծնողական , մանկավարժական խորհուրդներ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ:

***Ժամկետներ*** Քանի որ կրթությունը շարունակական, բարդ, արդյունքների ամփոփումների շնորհիվ նաև թերությունների շտկման հնարավորություն տվող գործընթաց է, այս խնդիրները իրենց լուծումները կստանան առաջիկա 5 տարիների ընթացքում՝ 2023-2026 ուսումնական տարիներ:

# Բյուջետային հնարավորություններ

ՀՀ կառավարության <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը,պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները եւ մեթոդաբանությունը սահմանելու մասին>> N 1481-Ն որոշմամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին >> հրամանով հաստատվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների ՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման

գործակիցները և նորմատիվները ։Հրամանն ուժի մեր կմտնի 2023 թվականի սեպտեմբերի 1-ից։
Քանի որ դպրոցը հիմնական և, հաճախ, միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար կամ անբավարար լինելն է։
Դպրոցի բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները աշխատավարձերն են և դրան հավասարեցված վճարումները և եկամտահարկի վճարները։
Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում։
Իսկ գրասենյակային և տնտեսական ծախսերի և գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերի ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են։ Բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում նաև կապի ծառայությունների, էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման, ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով , կոմունալ ծառայությունների վճարները։
Ֆինանսական միջոցների սղության դեպքում դպրոցի տնօրենը կարող է
1 Իր վրա վերցնել վերապատրաստումներ իրականացնելու պատասխանատվությունը։
2 Գտնել դպրոցում այնպիսի մասնագետներ, ովքեր կարող են ինքնուրույն ուսումնասիրել և այնուհետև կամավորական հիմունքներով վերապատրաստել իրենց գործընկերներին։
3 Ստանալ ԿԶՆԱԿ-ի աջակցությունը։
4 Դիմել տարբեր բարեգործների՝ օժանդակությունը ստանալու համար։
5 Մասնակցել դրամաշնորհային ծրագրերին։
Ամասիայի միջնակարգ դպրոցի 2023-2028 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը ներկայացնելիս թվարկեցինք մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար ֆինանսական լուրջ ներդրումներ են անհրաժեշտ։Դպրոցը , ինչպես վերևում նշվեց, ընդգրկված է ՀՀ Կառավարության կողմից նոր կառուցվելիք դպրոցների շարքում։Հետևաբար, ներկայիս մասնաշենքերում ֆինանսական մեծ ծախսեր պահանջող աշխատանքներ չենք կարող կատարել։ Դրամաշնորհային ծրագրի ընձեռած ֆինանսական միջոցներով հնարավոր կլինի կազմակերպել <<SMART >> դասասենյակի նորոգումն ու կահավորումը։Դրամաշնորհը շահելու պարագայում կունենանք SMART գրատախտակ, նաև 10 համակարգիչ, տպիչ և հնարավորություն իրականություն դարձնելու Ամասիայի զբոսաշրջային պոտենցիալը բացահայտող, հայրենաճանաչությանն ուղղված ծրագիրը։

## Դպրոցի հիմնախնդիրների լուծում

1. Հարստացնել ՏՀՏ նյութատեխնիկական բազան։

2. Դպրոցում ներմուծել «Անձնական պատասխանատվության» դաս, որի ընթացքում սովորողը մի ամբողջ տարի կպարտավորվի համայնքի որևէ հատվածում զբաղվել կամավորական գործով՝ ծառեր տնկել, խնամել, վերցնել որևէ «X» տարածք և զբաղվել դրա մաքրությամբ (համայնքի հուշարձաններ), մասնակցել  հանրօգուտ աշխատանքների և այլն: Արդյունքում կկերտենք այն անհատին, ով իր վրա պատասխանատվություն վերցնել է սովորում, ստանում է արդյունք ու գնահատվում, ինչն էլ կնպաստի միմյանց և միջավայրի նկատմամբ անտարբերությունը վերացնելուն:
3. «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ծառայություններից օգտվող սովորողների թվի ավելացում և համապատասխան մրցույթներում մրցանակային տեղերի ակնկալում:
4. Գրադարանային ֆոնդի համալրում՝ ի նպաստ սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման:
5. Միջդպրոցական օլիմպիադաների, ներդպրոցական առարկայական վիկտորինաների, մշակութային միջոցառումների կազմակերպում ( ազգային տոների, ծիսական խաղերի ,ուտեստների հանրայնացում ):
6. Անվանի գրողների, արվեստագետների, երաժիշտների հետ հանդիպումների կազմակերպում:
7. Մարզային և հանրապետական փուլերում  օլիմպիադաների  մասնակիցների թվի ավելացում և մրցանակային տեղերի ակնկալում (օժտված երեխաների բացահայտում և նրանց հետ հատուկ աշխատանքի իրականացում):
8. Բարերարներ ներգրավելու գործընթացի մեկնարկ մեկ դասասենյակի կահավորման ակցիայով՝ բարերարի «Անվանական ցուցանակ» տեղադրելով: Այն կմոտիվացնի շատերին՝ անվանական դասասենյակներ ունենալու տեսլականով:
9. Դպրոցի ֆիզիկական միջավայրի բարելավում. մուտքերի մոտ թեքահարթակների պատրաստում:
10. Խրախուսանքի տարբեր ձևերի կիրառում պատվոգրերի, նպատակային էքսկուրսիաների, թանգարաններ և մշակութային օջախներ այցելությունների տեսքով ՝խրախուսելով թե՛ սովորողին, թե՛ սովորողի ծնողին, թե՛ ուսուցչին:
11. Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում՝ դպրոցի տոնացույցում «Ընտանիքի օր» նշելը դարձնելով ավանդույթ:



Մեր կարգախոսը.

Միասնական ոգի
Բարձր կարգապահություն
Համակարգված աշխատանք
Կրթության որակ

# Օրենսդրական կարգավորումները

- <<Կրթության մասին>> օրենք
- <<Հանրակրթության մասին>> օրենք
- <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենք
- <<Լիցենզավորման մասին>> օրենք
- <<Ստանդարտացման մասին>> օրենք
- ՀՀ կառավարության 25.07.2002թ. N 1392-Ն որոշում
- ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 914-Ն որոշում
- ՀՀ կառավարության 24.08.2006թ. N 1262-Ն որոշում
- ՀՀ կառավարության 22.09.2022թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը,պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին>> N 1481-Ն որոշում
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 07.12.2022թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> N 79-Ն հրաման
- ՀՀ կառավարության 23.07.2015թ. <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին>> N 797-Ն որոշում
- ՀՀ առողջապահության նախարարի 28.05.2017թ. N 12-Ն հրաման
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 26.08.2022թ. N 21-Լ
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 22.09.2022թ. N 35-Ն հրաման
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18.04.2023թ. N 399-Ա հրաման